

Դարգելի զիմումն ալ՝ Արագոնի թագաւորին մօտ՝ պարապը չանցաւ : Պետրոս Դ թէեւ նախապէս զթուարութիւններ կը հանէր եւ միայն Յաղթնքի անունը կրող ցովանաւը Դարգելի տրամադրութեան տակ կը դնէր, այլ եւ այլ ծախքերէ ու նուէրներէ խուսափելու համար, բայց երբ Դարգել զգաց Պետրոսի մերժելուն նպատակն եւ առաջարկեց Արագոնի պետութեան մէջ գանուող բոլոր եկեղեցիներու եկամուտն յատկացնել Լեոնի փրկութեան գործին, պապին առջեւ պատասխանատուութիւնն իր վրայ առնելով, տեղի տուաւ թագաւորն եւ ո՛չ միայն յանձնարարական թղթեր տալով Դարգելի՝ զրկեց իր իշխանութեան տակ գտնուող առաջնորդներու եւ մեծամեծներու, որպէս զի անո՛նք ալ իրենց աջակցութիւնը տան Լեոնի ազատութեան համար, այլ եւ Փրանկիսկոս Սակլոզա անունով վաճառականի մը հետ — որ առեւտրական գործերու կարգադրութեան համար Եգիպտոս կերթար Պետրոսի կողմէ — հետեւեալ թուղթը զրկեց սուլտանին .

Թուղթ Պետրոսի Դ առ սուլթանն Եգիպտոսի (1)

Ես Պետրոս, շնորհին Աստուծոյ, թագաւոր Արագոնի եւն., առ պերճաշուք եւ ամենահզօր իշխան՝ սուլտան Բաբելոնի, ողջոյն եւ մաղթանք իր երջանկութեան համար :

Մեծապէս կը զթանք, պերճաշուք իշխան, այն ամենուն համար որ գերութեան մէջ կը գտնուին ու բանտարկուած են, եւ մարգասիրական ոգիով կը կարեկցինք ամէն վշտացեալներու : Բայց ինչ որ կը վերաբերի թագաւորներու, իշխաններու եւ բարձրաստիճան անձերու, երբ ըլլան բանտի կամ գերութեան մէջ, ա՛լ աւելի կզգածուինք եւ հետեւարար կը մասնակցինք իրենց կրած թշուառութեանց :

Արդ այս պատճառով, պերճաշուք իշխան, պատշաճ կը համարինք եւ բոլոր սրտէ կը բաղձանք ազատութիւնը Հայոց թագաւորին, իր կնոջ՝ թագուհիին ու իր զաւակներուն, զորս բանտարկած էք եւ որոնք Ձեր իշխանութեան տակ կը գտնուին :

Այս նպատակով մի քանի անգամներ գրեցինք Ձեր մեծապաշտօնութեան, որ կրնար գնահատել (մեր զիմումը) : Հիմա գալով յիշատակութեան Փրանկիսկոս Սակլոզայի, որ մեր հաւատարիմ հպատակն է եւ վաճառական ու նաւատէր ի Բարչինոնա (= Բարսելոնա), եւ

(1) Բնագիրը տե՛ս գրիս վերջը՝ Document VII.